

Հայ գրերի գիւտի և տպագրութեան յօ-
րելեանք շքեղ տօնելու համար՝ այստեղ
արդէն երկու ամիս առաջ պատրաստու-
թիւններ էին սկսված. ընտրված էր մի
յանձնաժողով, որի մէջ տեղիս ինտելիգեն-
ցիայի անուամբ մտան դարձեալ անխոնջ
ուսուցիչները (ի բաց առեալ երկու հոգա-
բարձուները): Միայն սրանք էին, որ «հա-
սարակութեան» անուան տակ իրանց ու-
սերի վրա տարան հանդէսը կազմակերպե-
լու ամբողջ ծանրութիւնը:

Երէկ Կարապետեան դպրոցի դահլիճում
կայացաւ այդ հանդէսը: Մինչ այդ՝ ս. Փրբ-
կիչ եկեղեցուէ հոգեհանգիտ կատարվեց
հայ գրական դործիչների յիշատակին, որից
յետոյ հոգեւոր դասը հանդիսաւոր թափօրով
եկաւ դպրոցի դաւիթը, որտեղ եղաւ հայ-
րապետական մաղթանք: Հասարակութիւնը
լցրել էր դպրոցի բակը:

ժամը 11¹/₂-ին հանդէսը բացվեց «Մեր
հայրենիք» երգով, որից յետոյ ճառախօ-
սութիւններ եղան ընդհանրապէս գրերի և
մասնաւորապէս հայ «գրերի գիւտի ու աը-
պագրութեան» մասին. առաջինը կարգաց
ուս. Ա. Մնրխճեանը, իսկ երկրորդը՝ ուս. Մ.
Աստուածատրեանը: Այնուհետև կարգաց-
վեցին հատուածներ հին գրականութիւնից՝
Մ. Խորենացուց, Եղիշէից, Ն. Գուշուկից և
Եզ. Կողբացուց և արդի գրականութիւնից՝
Խ. Աբովեանից, Յ. Պարոնեանից, Ա. Ահա-
րոնեանից և Արշ. Մխիթարեանից: Մէջ
ընդ մէջ երգուէ էր երկսեռ քառաձայն
խումբը և նուազուէ լարանուագախումբը,
առաջինը՝ ուս. Պ. Տէր-Կարապետեանի և
երկրորդը՝ քաղաքային դպրոցի ուս. Գ. Էկ-
սանեանի ղեկավարութեամբ:

Բեճը դարդարված էր կանաչ ճիւղերի ու
թարմ ծաղիկների գիրլեանդներով, երկու
կողմերուէ և մէջ տեղը կախված էին վար-
ժուհի օր. Ա. Սագինեանի նկարած ս. Մես-
րոպի, Սահակի և Յ. Գուտատենքերգի իւզա-
ներիկ մեծադիր պատկերները:

Հանդէսը վերջացաւ ժամը 3¹/₂-ին: Հա-
սարակութիւնը ուրախ տրամադրութեամբ
հեռացաւ հանդիսատեղից: Բայց, դժբաղ-
դբար, ինչպէս և միշտ, այս անգամ էլ
կարգապահութիւնը հասարակութեան մէջ
բացակայուէ էր: Հանդէսի մուտքը ձրի էր:
Շուտով նոյն յօրելեանի առիթով կը արվի
մի ներկայացուէ, որի հասոյթը կը յատ-
կացվի դպրոցական ֆօնդին: Էլզրի՛